ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՊՈԱԿ

<<ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ОВ.ТУМАНЯНА>> ГНО МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

✉ ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36
☎ /0322/ 4-63-87
Fax /0322/ 4-18-56

թիվ 1 որոշման
<<23>> մարտի 2015թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ 11/3>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ 11/3>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Վանաձորի Պետական Համալսարան >> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու՝Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված աշխատանքները:

Սույն ընթացակարգի ծածկագիրն է հանդիսանում << ՎՊՀ-ՇՀԱՇՁԲ 11/3-15/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենք,ընդհանուր բաժին մինչև 2015 թ. ապրիլի 3-ը, ժամը 10:00-ը:

Հայտերը կբացվեն ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենքում, 2015 թ. ապրիլի 3-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում տպագրական աշխատանքներ:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես մեկ չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:Գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվում է մեկ թվով, պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Մասնակցի կողմից առաջարկվող գինը ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց արժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն,
2. գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով /մեկ բնօրինակ և երկու պատճեն/:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՇՁԲ 11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանք ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները, պարտադիր նշելով "համարժեք" բառը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner@vsu.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 9 թերթ:

Ռեկտոր՝ Գ.Խաչատրյան

Կատարող՝ Գնումների համակարգող
☎ 094007607

Հավելվածթիվ 1
<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ 11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ԿՊՀ-ՇՀԱՇՁԲ 11/3-15/2>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____Հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N_____ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին(չափաբաժիններին)

չափաբաժնի (չափաբաժինների)համար

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով(կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝_____:

Ընթացակարգիի մասնակցի անվանումը (անունը)

_____

_____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (Ստորագրությունը) Կ.Տ.

'___' _____2015թ

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ 11/3>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ՎՊՀ-ՇՀԱՇՁԲ 11/3 -15/2>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **<<** ----------**>>** ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ---------- առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1		*3*	*4*	*5=3+4*

***3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎՊՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/2

ք. Վանաձոր <<___>>_____

Վանաձորի պետական համալսարանը, (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս ռեկտոր Գ. Խաչատրյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ----- -ն, (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս --------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքները և վճարել դրա համար:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողն համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից.

2.1.2 Եթե կատարվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց կատարման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.4.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողն Աշխատանքի (Աշխատանքի առանձին փուլի) կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողի է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարած Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է ..... (.....) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Աշխատանքների կատարման որակի և սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ---------:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: *** *Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ:*

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի կատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.6 Սույն պայմանագրով նախատեսված պայմանագրի կատարման ապահովումը վերադարձվում է Կատարողին՝ պայմանագրի կատարման ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում կամ կողմերի համաձայնությամբ՝ կատարմանը համամասնորեն:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 1
<<>> ------2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՇՁԲ-11/3-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Տպագրական աշխատանքներ

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Քանակը
1	Տպագրություն	Գիտաժողովի նյութերի և ծրագրի տպագրություն,տպագրություն, կազմում և հրատարակում, սև-սպիտակ նկարներով և աղյուսակներով	մամուլ	2500
2	Տպագրություն	Գիտաժողովի նյութերի և ծրագրի տպագրություն,տպագրություն, կազմում և հրատարակում, գունավոր նկարներով և աղյուսակներով	մամուլ	700
3	Բուկլետներ 1	ՎՊՀ-ի բուկլետների տպագրում՝ հայերենով,246x420մմ, երկկողմանի,A3 չափի, գունավոր	հատ	150
4	Բուկլետներ 2	ՎՊՀ-ի բուկլետների տպագրում՝ ռուսերենով,246x420մմ, երկկողմանի,A3 չափի, գունավոր	հատ	100
5	Բուկլետներ 3	ՎՊՀ-ի բուկլետների տպագրում՝ անգլերենով,246x420մմ, երկկողմանի,A3 չափի, գունավոր	հատ	150
6	Թենոց	Սիլիկոնե,սպիտակ և կապույտ,ՎՊՀ լոգոյով, լայնությունը 12մմ,տրամագիծը՝ 65մմ	հատ	50
7	Շապիկներ ՎՊՀ ՈՒԽ	Սպիտակ,աջ թևին ՎՊՀ լոգոն, ձախ թևին ՈՒԽ լոգոն, կրծքի ձախ կողմում ՈՒԽ լոգոյով, մեջքի հատվածում ՎՊՀ և տակը գրված Ուսխորհուրդ 1)20հատ-44,2)15հատ-46, 3)15հատ-48 չափսերի	հատ	25
8	Շապիկներ ՎՊՀ	Սպիտակ,աջ թևին և կրծքի ձախ կողմում ՎՊՀ լոգոյով, 1)20հատ-44,2)15հատ-46, 3)15հատ-48 չափսերի	հատ	50
9	Վզկապներ ՎՊՀ լոգոյով	Ացետատե մանրաթելից (փայլուն կտոր), ուղղանկյունաձև,կապույտ և սպիտակ գույների համադրությամբ երկարության կեսով,երկարությունը 145սմ, լայնությունը 19սմ,ծայրերը եռանկյունաձև,մի ծայրին տպագրված լոգոյով	հատ	100
10	Տոպրակ լոգոյով	Սպիտակ,ՎՊՀ լոգոյով,250x400 չափսերի, որակյալ հաստ թղթից, չպատռվող,	հատ	100
11	Տոպրակ լոգոյով	Սպիտակ,ՎՊՀ լոգոյով,250x180 չափսերի, որակյալ հաստ թղթից, չպատռվող,	հատ	100
12	Թղթապանակ	ՈՒԽ լոգոյով,թղթե,450x320մմ, որակյալ հաստ թղթից	հատ	50
13	Թղթապանակ	ՎՊՀ լոգոյով,թղթե,450x320մմ, որակյալ հաստ թղթից	հատ	72
14	Լոգոյով վկայական	ՎՊՀ լոգոյով, 6.5x10 սմ փակված վիճակում,սպիտակ և կապույտ գույնի,կապույտ գույնի վրա սպիտակով գրված ՎՊՀ բարեկամ	հատ	50
15	Պաստառ	2x3 մ, ՎՊՀ ինստիտուտի պաստառ, նկարներով,վրան ընդունելության, լեզուների ուսուցման և այլ նյութերի վերաբերյալ տպագրություն, կլինկորե,դրսում փակցնելու համար	հատ	2
16	Տարեգրության վահանակ	1x1.5 մ,1 հատ ամառային(1896-2028թթ.),1 հատ ձմեռային(1924-2030թթ.) ժամանակակից օլիմպիական խաղերի տարեգրության վահանակ՝ ժամանակացույց (աղյուսակներով),փայլուն թղթից	հատ	2
17	Գրադարանային քարտ	7.5 x 12.5 սմ, 0.5 մմ հաստությամբ թուղթ,անփայլ ֆոտոթղթից	հատ	5000
18	Մատյանի կազմ	A4 ֆորմատի,երեսի մասը սուպերգլյանց,վրան ՎՊՀ գրված և	հատ	185

		լոգոն տպված, վրան գրված դասամատյան		
19	Օրացույց	Դասախոսների նկարներով,A4,12 թերթանոց,վերևից զսպանակով, որակյալ թղթից,2016թ	հատ	30
20	Օրացույց	Ուսանողների նկարներով,մեկ թերթանոց,A4,որակյալ թղթից, 2016թ	հատ	30
21	Օրացույց	Ուսանողների համակարգչային գրաֆիկայի նկարներով,կազմված մեկ եռանկյունաձև թղթից, դրվում է սեղանին,վրան նաև ամրացված 25 հատ նշումների թերթիկ,2016թ	հատ	30
22	Նոթատետրեր ՈՒԽ լոգոյով	ՎՊՀ փոքր A6 չափի վերևից զսպանակով, ստվարաթղթե փայլուն կազմով,օրերը նշված, 70էջ,ՎՊՀ-Ի տարբերանշանով	հատ	30
23	Նոթատետր 1	ՎՊՀ մեծ A5 չափի վերևից զսպանակով, ստվարաթղթե փայլուն կազմով, օրերը նշված, 70էջ, ՎՊՀ-Ի տարբերանշանով	հատ	100
24	Նոթատետր 2	ՎՊՀ փոքր A6 չափի վերևից զսպանակով, ստվարաթղթե փայլուն կազմով,օրերը նշված, 70էջ,ՎՊՀ-Ի տարբերանշանով	հատ	100
25	Գրիչ ՈՒԽ լոգոյով	ՈՒԽ լոգոյով,սպիտակ գրիչ կապույտ տպագրությամբ	հատ	100
26	Գրիչ ՎՊՀ լոգոյով	www.vsu.am կայքեջի հասցեով, սպիտակ գրիչ կապույտ տպագրությամբ	հատ	200
27	Ուսանողական տոմսեր	Կազմը կարմիր գույն,որակյալ,7 x 9.5սմ փակված վիճակում,վրան ոսկե տառերով գրված ուսանողական տոմս, առանց միջուկի	հատ	700
28	Ստուգման գրքույկներ	Կազմը կարմիր գույն, որակյալ,10.5 x 14.5սմ փակված վիճակում, վրան ոսկե տառերով գրված ստուգման գրքույկ, առանց միջուկի	հատ	700
29	ՈՒԽ լոգոյով դրոշ	Ացետատե մանրաթելից (փայլուն կտոր),դրոշ ՈՒԽ լոգոյով,մեծ,սպիտակ և կապույտ գույների համադրությամբ, 60x100 սմ, 200 սմ երկարությամբ փայտե պոչով,որից 60 սմ-ը զբաղեցնում է դրոշը	հատ	3
30	ՎՊՀ լոգոյով դրոշ	Ացետատե մանրաթելից (փայլուն կտոր),դրոշ ՎՊՀ լոգոյով,մեծ, սպիտակ և կապույտ գույների համադրությամբ, 80x140 սմ, 230 սմ երկարությամբ փայտե պոչով,որից 80 սմ-ը զբաղեցնում է դրոշը	հատ	5
31	Իսկության հավաստագիր	Կազմը մուգ կարմիր գույնի,վրան համալսարանին բնորոշ շենքով, ներքևում գրված ՎՊՀ-1969,15 x13.5սմ փակված վիճակում,առանց միջուկի	հատ	15

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 2
<<>> ------2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՇՁԲ-11/3-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տպագրական աշխատանքներ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Մատակարարման ժամկետը
1	Տպագրական աշխատանքներ	ըստ պահանջի
	Ընդամենը	

Հավելված թիվ 3
<<>> ---------- 2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՇՁԲ-11/3-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Դիպլոմների տպագրական աշխատանքներ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Վճարման ենթակա գումարը /դրամ/	Վճարման ժամկետը
1	Տպագրական աշխատանքներ		Ըստ մատակարարման
	Ընդամենը		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 4
<<>> -------- 2015 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՇՁԲ-11/3-15/2>>
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____
ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2015թ.

Պայմանագրի համարը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝<<->> ------ 2015թ:Պատվիրատուն՝Վանաձորի Պետական համալսարան ի դեմս ռեկտոր Գ.Խաչատրյանի:Կատարողն՝ ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները,մատակարարումների ծառայությունները /այսուհետև աշխատանքների/համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին-գնման ժամանակացույցին,կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը << >> 2015թ-ից մինչև <<-->> _____ 2015թ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ.դր)	Վճարման ժամկետը

Վերոհիշյալ աշխատանքների վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց Աշխատանքը ընդունեց

_____ _____

(ստորագրություն) (ստորագրություն)